ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Մենինգոկոկային ACWY պատվաստանյութ.

Ի՞նչ է անհրաժեշտ ձեզ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: www.immunize.org/vis կայքը

1. Ինչո՞ւ պատվաստվել:

Մենինգոկոկային ACWY պատվաստանյութը կարող է օգնել՝ կանխելու **մենինգոկոկային հիվանդությունը**, որն առաջանում է A, C, W, և Y շիճուկային խմբերի կողմից: Հանելի է նաև շիճուկային B խմբի դեմ պայքարող մեկ այլ պատվաստանյութ:

Մենինգոկոկային հիվանդությունը կարող է հանգեցնել մենինգիտի (գլխուղեղի և ողնուղեղի թաղանթի վարակ) և արյան վարակների: Նույնիսկ բուժման դեպքում՝ մենինգոկոկային հիվանդությունն սպանում է 100 վարակված մարդկանցից 10-ից մինչև 15-ին: Եվ նրանց շրջանում, ովքեր կենդանի են մնացել, յուրաքանչյուր 100-ից մոտավորապես 10-ից 20-ը, կտառապեն լսողության կորստից, ուղեղի վնասվածքից, երիկամների վնասվածքից, վերջույթների կորստից, նյարդային համակարգի խնդիրներից կամ մաշկի փոխպատվաստման հետևանքով առաջացած կոպիտ սպիներից:

Մենինգոկոկային հիվանդությունը հազվադեպ է և 1990-ականներից ի վեր՝ այն նվազել է Միացյալ Նահանգներում: Ամեն դեպքում, այն ծանր հիվանդություն է, որն ունի մահվան նշանակալի ռիսկ կամ տևական հաշմանդամություն է առաջացնում վարակվածների շրջանում:

Ցանկացած անձ կարող է վարակվել մենինգոկոկային հիվանդությամբ: Որոշ մարդիկ ավելի շատ ռիսկի տակ են, այդ թվում՝

- Մեկ տարեկանից ցածր մանուկները
- 16-ից մինչև 23 տարեկան դեռահասները և երիտասարդները
- Իմունային համակարգի վրա ազդող որոշակի առողջական խնդիրներ ունեցող մարդիկ
- Մանրէաբանները, ովքեր կանոնավոր աշխատում են *N. meningitidis*-ի մենինգոկոկային հիվանդություն առաջացնող բակտերիաների շտամների հետ
- Մարդիկ, որոնք իրենց համայնքում տարածված համաճարակի պատճառով ռիսկի տակ են:

2. Մենինգոկոկային ACWY պատվաստանյութ

Դեռահասներին հարկավոր է մենինգոկոկային ACWY պատվաստանյութի 2 դեղաչափ՝

- Առաջին դեղաչափը՝ 11 կամ 12 տարեկան հասակում
- Երկրորդ (խթանիչ) դեղաչափը՝ 16 տարեկանում

Ի հավելումն դեռահասներին տրվող մշտական պատվաստանյութի, մենինգոկոկային ACWY պատվաստանյութը նաև խորհուրդ է տրվում **որոշակի խմբի մարդկանց**.

- A, C, W, կամ Y շիճուկային խմբի մենինգոկոկային համաճարակի վտանգի տակ գտնվող մարդիկ
- ՄԻԱՎ-ով հիվանդ մարդիկ
- Ցանկացած մեկը, ում փայծաղը վնասված է կամ հեռացվել է, այդ թվում՝ մանգաղաձև-բջջային անեմիայով տառապող անձինք
- Ցանկացած մեկը, ով տառապում է իմունային համակարգի հազվադեպ հանդիպող հիվանդությամբ, որը կոչվում է «կոմպլեմենտի համակարգի բաղադրիչների անբավարարություն»
- Ցանկացած ոք, ով ընդունում է դեղամիջոցի մի տեսակ, որը կոչվում է «կոմպլեմենտի արգելակիչ», ինչպիսին է էկուլիզումաբը (նաև կոչվում է Soliris®) կամ ռավուլիզումաբը (նաև կոչվում է Ultomiris®)
- Մանրէակենսաբանները, որոնք մշտապես աշխատում են *N. meningitidis* շտամների հետ:
- Ցանկացած անձ, ով ճանապարհորդում կամ ապրում է աշխարհի այն հատվածում, որտեղ մենինգոկոկային հիվանդությունը տարածված է, ինչպես, օրինակ՝ Աֆրիկայի հատվածներում
- Հանրակացարաններում բնակվող քոլեջի առաջին կուրսեցիները, ովքեր ամբողջությամբ չեն պատվաստվել մենինգոկոկային ACWY պատվաստանյութով
- ԱՄՆ ռազմական զինակոչիկները

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

3. Խոսեք ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ

Ասեք ձեր պատվաստման հարցերով մատակարարին, եթե պատվաստանյութ ստացող անձը.

- Ունեցել է **ալերգիկ ռեակցիա մենինգոկոկային ACWY պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո**, կամ ունի որևէ **լուրջ, կյանքին սպառնացող ալերգիաներ**

Որոշ դեպքերում, ձեր առողջապահական խնամքի մատակարարը կարող է որոշել հետաձգել մենինգոկոկի դեմ ACWY պատվաստումը մինչև հաջորդ այցը:

Հղիների կամ կրծքով կերակրող կանանց համար այս պատվաստանյութի վտանգների մասին սահմանափակ տեղեկություններ կան, սակայն անվտանգությանն առնչվող որևէ խնդիր չի հայտնաբերվել: Ցուցման դեպքում հղի կամ կրծքով կերակրող կինը պետք է պատվաստվի:

Թեթև հիվանդություններ, ինչպես, օրինակ՝ մրսածություն ունեցող անձինք, կարող են պատվաստվել: Անձինք, ովքեր չափավոր կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև կազդուրվելը՝ նախքան մենինգոկոկային ACWY պատվաստանյութ ստանալը:

Ձեր բժիշկը կարող է ձեզ հավելյալ տեղեկություններ տալ:

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- Մենինգոկոկային ACWY պատվաստումից հետո կարող է առաջանալ կարմրություն կամ ցավ պատվաստման հատվածում:
- Մենինգոկոկային ACWY պատվաստանյութ ստացող մարդկանց մի փոքր տոկոսն ունենում է մկանային ցավ, գլխացավ կամ հոգնածություն:

Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բուժգործողություններից հետո՝ ներառյալ պատվաստումը: Հայտնեք ձեր բժշկին, եթե դուք թեթև գլխապտույտ եք զգում, կամ տեսողության փոփոխություն, կամ ականջներում զնգոց եք զգում:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ պատվաստանյութը լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ հանդիսանա:

5. Ի՞նչ տեղի կունենա լուրջ ռեակցիայի առկայության դեպքում:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե տեսնում եք լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ (եղնջատենդ, դեմքի և կոկորդի այտուցվածություն, շնչառության դժվարություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք **9-1-1** և տարեք անձին մոտակա հիվանդանոց:

Ձեզ մտահոգող այլ նշանների առկայության դեպքում զանգահարեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին:

Անբարենպաստ ռեակցիաների մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի հետ կապված անբարենպաստ երևույթների հաշվետվությունների համակարգին (Vaccine Adverse Event Reporting System, VAERS): Սովորաբար այս հաշվետվությունը կներկայացնի ձեր առողջապահական խնամքի մատակարարը, կամ դա կարող եք ինքներդ անել: Այցելեք VAERS-ի կայքէջ՝ **www.vaers.hhs.gov**, կամ զանգահարեք **1-800-822-7967**: *VAERS-ը միայն ռեակցիաների մասին հաղորդելու համար է, իսկ VAERS-ի անձնակազմի անդամները չեն տրամադրում բժշկական խորհրդատվություն:*

6. Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր

Պատվաստանյութից ստացված վնասվածքի փոխհատուցման ազգային ծրագիր-ը (National Vaccine Injury Compensation Program, VICP) դաշնային ծրագիր է, որը կոչված է փոխհատուցելու որոշակի պատվաստանյութերից վնասվածք ստացած մարդկանց: Պատվաստման հետևանքով ենթադրյալ վնասվածքի կամ մահվան վերաբերյալ հայցերի ներկայացման ժամկետը կարող է լինել երկու տարի: Այցելեք VICP-ի կայքէջ՝ **www.hrsa.gov/vaccinecompensation**, կամ զանգահարեք **1-800-338-2382**՝ տեղեկանալու ծրագրի և հայցի ներկայացման մասին:

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Հարցրեք ձեր առողջապահական խնամքի մատակարարին:
- Զանգահարեք ձեր տեղական կամ նահանգային առողջապահության դեպարտամենտ:
- Այցելեք Սննդամթերքի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) կայքէջ պատվաստանյութի փաթեթի ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ **www.fda.gov/vaccines-blood-biologics/vaccines**:
- Կապվեք հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) հետ՝
  - Զանգահարեք **1-800-232-4636** (**1-800-CDC-INFO**) կամ
  - Այցելեք CDC-ի կայքէջ՝ **www.cdc.gov/vaccines**:

Armenian translation provided by Immunize.org